

49 Եւ այն զի մեծ էր ի հայս իւր անուն,  
 վասն այն ոչ բաւէր անդր յաչաց նոցուն  
 Պահել ըստ այլոց զանձն անտես թագուն,  
 Ուստի եւ անդրէն յարեցաւ ի նոյն :

50 Այլ զայս ինչ առնէր նա բարի մըտօք,  
 Զի կամէր ածել զԱղբ իւր քարոզօք  
 Յուղղելոց փարախ անմոյս շաւղօք  
 Եդեալ վասն իւրոց զանձն ընդ վըտանգօք :

### Ե Ր Պ Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Պ

Որ պատմէ Սարգսի ըզփառս յարգանաց  
 Ընտանանէ իւրոց աշակերտոց  
 Եւ զանկարգ ըզգործ իւրոց հալածւաց  
 Եւ պատճառ նորուն շար պատրանաց :

1 Եմուտ դարձեալ Սարգիս ըբուռն  
 Յըզմիւռնիայ յայնց ժամատուն,  
 Որք ոչ տանին ըստ արժանւոյն  
 Լուսաւորչեան պայծառ անուն :

2 Անդ նա ի բեմ ելանելով,  
 Զերթ ուղղափառ քարոզելով,  
 ԸզՍուրբ Լեւօն շանիծելով,  
 Ատիւր յոմանց բամբասելով :

3 Իսկ այլք յանձանց Հայոց տեղւոյն  
 Որք տենչացօղ էին ուղղոյն,  
 Ունկրն եդեալ բանի նորուն՝  
 Նահանջէին ի թիւր ուղւոյն :

4 Եւս եւ Սահակ պեան ահագին  
 Որ առանջնորդ էր անդ Աղգին,  
 Առ նախանձու անսէր սրբտին  
 Ատէր զեղբայր իւր ցանկային :